

միածինը ի՞նչ էր... և պահել իւր մօտ Ելաշկերացի
 գաղթականների անունով հաւաքած 17,000 Ր. գումարը ։
 Ա Յ Յ Մ. Երեսնամեակը սորանից մի քանի ամիս յառաջ ևս Մշակ
 62 Խուճ. թղլ էր տուել իրան նոյնատեսակ գրախօսութեամբ յարձա-
 կել Էջմիածնի դէմ ։ Երարատը նորան համեատարար պատասխանելով ։
 ցոյց տուեց ինն ամիս յառաջ իւր թերթում հրատարակած Սինօղի
 1879 թուականի օգոստոսի 22ի օրագրութիւնը որով Ա.Ե. Հայրապետի
 տնօրէնութեամբ գաղթականների անունով ժողովուած 16,358 Ր. (և ոչ
 17000) արժեթղթեր է դնուած Իւլիսիսի Ս. Յովհաննու վանքի գարո-
 ցի անունով ։ որոց տակօր պէտքէ գործ զուին նոյն գարոցի վերայ և ըն-
 (տես 1880 թ. Ապրիլի Երարատը) Ահա այս գումարի ի՞նչ նպատակաւ
 պահելու և գործարկելու պարզ կարգադրութիւնը պաշտօնապէս հրատա-
 րակելուց յետոյ Ելնել ։ հարց տալ թէ ։ Ի՞նչ նպատակով է պահուած
 Ելաշկերացուց գումարը Էջմիածնում ։ ի՞նչ է նշանակում ։ Եթէ ոչ ան-
 միա զրախօսութիւն ։
 Ենթադրելով որ գուցէ Պ. Յ. Մ. ինչէ յաջողել կարող է այդ օրա-
 գրութիւնը Երարատի թերթերում ։ թերևս մի փոքր ներելի լինէր նորան
 այդ զրախօսութիւնը ։ բայց դու տես որ ։ պարօնը Երարատի այդ պա-
 տասխանը կարգաւորց յետոյ ևս փոխանակ իւր սխալմունքը ուղղելու ։
 ընդհանրապէս այդ մեր ներելի ենթադրած սխալմունքը յամառութեան
 փոխելով զարձեալ թղլ է տալիս իրան ։ Մշակ ։ 151 Խուճ. ևս կրկնե-
 լու ։ ի՞նչ իրաւունքով ։ ի՞նչ նպատակով է պահել իւր մօտ Էջմիածինը
 Ելաշկերացի գաղթականների անունով հաւաքած 17,000 Ր. գումարը ։
 Թէ ։ ո՞ւր անուտով են արժեթղթերը ։ և թէ ։ գարոցի մասին մեր գեռ
 ոչինչ չգիտենք ։ արդեօք գոյութիւն ունի նա ։ Ըջմարտ է ասուած
 հասկացողին մէկ ։ չհասկացողին հազար ։ Պ. Յ. Մ. Դու որ Սինօղի
 պաշտօնական օրագրութիւնից և Չեր առաջին անգամ առաջարկած հար-
 ցին ասուած ։ Երարատի ։ պատասխանից Կարողացաք ոչինչ հասկանալ ։
 ուրեմն կամ վերին անտիճանի չհասկացող էք ։ Կամ զրախօսութիւնը
 Չեղ սովորութիւն էք արել ։ ո՞վ է մեզաւոր որ զուր չուտիք կամ չէք
 կամեցել ունենալ տեղեկութիւն արդէն գոյութիւն ստացած և քանիցս
 անգամ հրատարակուած իրողութիւնների մասին ։ Եթէ միւր ջուրտ ձեռ-
 քով աչքերը փակած զրկու մէ ինքն իրան արեղական լուսից ։ այդ մի թէ
 յշանակու մէ թէ արեղակը լոյս չունի ։
 Պ. Յ. Մ. մեր բարեկամարար խորհուրդ կտայինք Չեղ ։ որ եթէ զուր
 Եղգին ծառայութիւն անել էք կամենում ։ արեք մի այլ միջոցով որով
 ընդունակ էք ։ զուր շահախնդիր և պաշտօնական ձեռնալ չէք կարող այն
 ազդին ։ որի անցեալ և ներկայ պատմութեանը այն սատիճան անտեղեկ
 էք ։ որ նոր էք կամենում հարցասիրել նորա Մայր Աթոռ Էջմիածնի
 և ճարտագահալ ։ Հայրապետի իրաւունքն էր այսօրինակ ազդային ինքն
 զրններում ։ այդ հարցասիրութիւնը թերևս ներելի կլինէր մի օտարազու

և ոչ հայ շրագրական ասպարիզում գործել ցանկացողին։ Հարցրէք Էջմիածնի իրաւունքների մասին ոչ միայն բանիմաց՝ այլ ամենոցեւոթն անգրագէտ հային ։ նա ձեռք իւր բառերով կհասկացնէ որ՝ Էջմիածնը այսպիսի խնդիրներում ներգործու մէ այն իրաւունքով ։ որը գաւրերէ ի վեր վաւերել է ։ մայելում է և պիտի վայելէ նորանից ։ այն իրաւունքով ։ որը տալիս է իրան իւր հարազատ հայ դաւակնների գէպի քննքն ունեցած հաւատարմութիւնը ։ այն իրաւունքով ։ ինչ իրաւունքով որ հարազատ ծնողը պահում է իւր զաւակաց ժառանգութիւնը ։ անորինում նորա գործադրութեան եղանակն և որոշում նորա նպատակը ։ Վերջապէս այն իրաւունքով ։ որը Հայ ազգը հաւատացել է նորան իրրև բարոյական Սրտի Տիրոջ և Իշխանի Հայ ազգութեան ։

Թէ մեր Ազգը իւր փրկութեան յոյսը միմիայն իւր ազգային նիւթապէս ու պահպանող գործոցներից է սպասում ։ այս անուրանալի է ։ ուրեմն մեր Ազգայինում Հայրապետի իմաստուն և հեռատես կարգադրութիւնը վերոյիշեալ գումարի մասին այնչափ ապահով ։ այնչափ անվտանգ և բարենպատակ է ։ որ ոչ որ բանիմաց սպառնալից չի տարակուսիլ յիշեալ կարգադրութեան մասին ունեցած դիտաւորութեան անկեղծութեանը ։ թէկուզ ոչ միայն Յ. Մ ։ այլ նորա պէս շատերը ևս իւրեանց անմիազրախօսութեամբ ջանային սուեր ձգել Էջմիածնի դիտաւորութեան անկեղծութեանը ասելով ։ եթէ Էջմիածնի դիտաւորութիւնը անկեղծ է ։ . . . մենք խորհուրդ կտայինք այլ փոշերով դնել թուրքաց Հայաստանում մի կտոր հող և ին ։ ին ։

Պ. Յ. Մ. դո՛ք Ձեր գրասենեակի մէջ նստած գուցէ Ձեզ շատ խելօք էք համարում ։ բայց կարծել՝ որ Հայ ազգը ևս Ձեր տուած խորհուրդը Էջմիածնի կողմից ընդունելը՝ սորա դիտաւորութեան անկեղծութեան պայման կհամարէ ։ այդ շարաշար անձնախարութիւն է ։ Հայ ազգը այնքան երեսայամառ չէ ։ եթէ նորա մէջ գտնուում են մի քանի քեզ շոյող ։ զրգող ։ խարող և իրանց նենդ նպատակներին ծառայացնողներ ։ կան նորա մէջ և շատ այնպիսի ողջախոհ անձինք ։ որոնք իւրեանց թափանցիկ և հեռատես աչքերով պարզ տեսնում և կարգում են Ձեր անկեղծ ձեացող գրուածքներից ակամայից դուրս ցորացող կեղծ մտքերը և Ձեր բռնած գայլակղեցուցիչ ընթացքը ։ Եւ արդարև որ ուղղադատ և անկեղծ անձը թոյլ կտայ իրան այսօրինակ զրախօսութիւններով աղղոյնոց պարզ մտքերը պղտորել և որ հեռատես և շրջահայեաց անձը ներկայիս մշտափոփոխ հանգամանքների խառնաշփոթութեան մէջ կլղանայ Տաճկա—Հայաստանում հող գնելու միտքը ։ Ամեն խօսք իւր տեղում ։ ամեն գործ իւր ժամանակին տուած է ։ Ահա՛ մեր վերջին և առաջին պատասխանը այս խնդրի վերաբերութեամբ ։

Ս. Վ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ։